

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Մ. Ա. Մ. Ո. Ի. Լ.

Վտակի երեւումը. — Պոռչանցի գրական կեանքի մասին. — Կովկասի առաւօտ. — Աւետիս Իսահակեանի մէջ արձակ բանաստեղծութիւնը:



Աւետիս Իսահակեան

ՎՏԱԿ

«Նոր-Ալիք»ը, ինչպէս փութացեր էի ծանուցանելու, Վտակի փոխուեցաւ անցեալ դեկտեմբերին:

1907ի վերջերը, բաց ի խրմանէն, մեր արդի գրականութիւնը կորսնցուց նաեւ վիպասան մը, պ. Պոռչանց. ու Վտակ շտապեցաւ անոր մահազդին հետ՝ թողցիկ ափնարկ մը տալու վիպասանի կեանքին վրայ:

«Մէկն էլ պակսեց մեր նորագոյն գրականութեան ռազմիրաներից, — կ'ըսէ յօդուածագիրը՝ պ. Վահէ (Վտակ, N. 4). — Նա, որ մի քանի տասնեակ տարիներ շարունակ մասնակցել է մեր գրական-պարտական կեանքին, թէ իբրեւ ուսուցիչ ու տեսուչ և թէ մանաւանդ իբրեւ ժողովրդական կեանքը պատկերացնող մի գրող»:

Բայց Պոռչանց ժողովրդականութիւն չհասած է՝ իբր վիպասան: «Արովմանից յետոյ, — կ'ըսէ պ. Լէօ (Ռուսաստան գրակ. էջ 188), — միզանում ազգագրական վէպը

հաստատուեց... Այդ տեսակ վէպի ամենախոշոր ներկայացուցիչն էր նա՛ր: Ուզած էր ան հաւատարիմ ըլլալ իր ծննդավայրի գեղջկական պատկերները նկարելու՝ քան թէ վէպ մը շարադրելու մէջ: Այս միշտ երկորդական նշանակութիւն ունէր, երբ նա գրիչ ձեռք կ'առնէր՝ երգելու համար, — ինչպէս ինքը կը յայտնէ, — ւրտ մեր տկար կարողութեան մեր հայրենեաց սովորութիւնը, վարքն ու բարքն և այլ այսպիսի արտաքին ծէսերը: Ու դեռ տեսէք թէ ինչ կ'ըսէ իր «Սոս և Վարդիթերոյի նախարանին» մէջ.

«Կարդալով մեր նախնեաց պատմութիւնները և գտնելով նրանց մէջ ժողովրդեան կենաց մի քանի նկարագրեր, աչքերնիս առաջին անհնաւով մեծացանքար Արովմանի «Վէրք Հայաստանի»-ն, սիրահարեցանք մեր հարց մեզ թողած աւանդութիւնների վրայ, և կամելով ծառայել ազգիս, իբրեւ յոնձնէ եղեալ, երգեցինք... մեր հայրենեաց սովորութիւնը, ... Առարակ գիւղի սովորութիւնը. Ե մէջ բերելով ամենափոքր և չնչին համարուած արարողութիւնների անգամ առանց զանազանելոյ լսան ու վստաք»:

Երբեք գրական ճիւղի մը խոստովանութիւնը այսպիսի պարզ, զրեթէ միամիտ շեշտ առած չէր: Ինչպէս կը տեսնէք, իր նպատակը՝ բաւական սիրուն՝ շատ պիտի հեռացած գտնենք, երբ մտածենք իր բերելիք մանրամասնութիւնները անպատճառ վէպի մը մէջ տեսնել:

Եւ Պոռչանց «մինչև և վերջը հաւատարիմ մնաց այդ դրութեանը»: Նա սիրեց չլքելուցնել փորրիկ մանրամասնութիւնները, գիւղի աննշան սովորութիւնները, որոնց իր սիրտը նախ անընկալութիւնը զօդուած էր, և որոնց մէջ նա մի թարմ, հրապուրող լեցուն յուշեր ու ծածուկ մտքեր կ'անդադառնար: Իր ամէն վէպերու

«Էներգի, — կը շարունակէ պ. Վահէ, — գիւղական կեանքի համը ու հրան է բուրում, զրեթէ բացառապէս

Աշտարակի շարն ու բարին է պատկերացնում անպա-
ճոյճ և ճշգրիտ դոյներով»։

Իսկ այս բոլոր նկարները՝ կու գար կը պննէր լեզուն, ժողովրդեան լեզուն. — հեղինակի կողմէն վերջին ճիգը՝ այլ եւս ընթերցողին մէջ կասկած չթողլու համար թէ իր խղճատօրէն ներկայացուցած ուղ-
ղակի Աշտարակէն է։ Կարգալով իր վե-
պերը, մենք հանդիպել կը կարծենք վարդի մը թերթերուն, զորս՝ զեռ թարմ՝ զբաժ էինք մեր սիրած մէկ գրքի էջերուն մէջ. առոնք հիմայ չունին ալ իրենց Ապրիլի օրերուն ձգիչ ուժը, — ինչպէս չունին նաեւ Պոռեանցի վէպերը, — սակայն միշտ յուշերն են... մեր սիրած երկրին, թե-
րեւ. ու մենք կ'ախորժինք յաճախ աչքէ անցնել զանոնք։ «Սօս և վարդիթեր» — «Բագէշ» — «Դահնէ» եւն պիտի մոռցուն վաղը իբրեւ վէպեր. բայց պիտի յիշուն ու պիտի թղթատուն անոնք՝ ամէն ան-
գամ որ խօսքը մեր հայրենի գիւղերու մասին դառնայ. — և ես չեմ կրնար ե-
րեւակայել վայրկեան մը՝ որ կարենանք չխօսիլ այդ գիւղերուն վրայ...

Այսպէս են ահա այդ վէպերը, որոնց հեղինակը մեռաւ 1907ի դեկտեմբերին, եօթանասուն տարեկան (ծն. 1837), ոչ թէ փառքի ավարդերուն տակ խղճուածոյ — ինչպէս յաճախ արեգադղ գրագէտները Եւ-
րոպա, — այլ և ընտանեկան վշտերի ու կարիքների բեռի տակ կորացածոյ։

Շատ ճիշտ չէ, երբ մէկու մը համար կ'ըստի թէ «փառքի գագաթնակէտն է»։ Այդ կէտին հասնելու համար՝ զեռ քայլ մըն ալ հարկաւոր է. պէտք է որ ան... մեռնի. բան մ'ալ միշտ մահը կ'աւելցնէ շինուած փառքին վրայ։ Աս մենք լաւ գիտենք. և անոր համար է որ մեր գրուա-
տիքներու և համակրութեան ծաղիկները կը պահենք՝ սփռելու համար... գերեզմա-
նին վրայ։

ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՌՈՏ

Շատոնց երեկոյ եղած է։ Բայց իր N. 32 թերթին մէջ աքնբոյճ և մեղմաշունչոյ բան մը կայ՝ որ միշտ թարմ պիտի մնայ։ Պ.

Ա. Խահակեանի ԱՍիրահար Քամինը։

Հին սերունդի մնացորդը, պ. Խահա-
կեան. այն դարերուն՝ երբ ռամկի վառ երեսակայութիւնը՝ դիցաբանութիւնը կը ստեղծէր, և երբ քամիի մը շշնկոցը, հե-
ղեպատի մը շառաշը՝ հեռուէն, բլրան գա-
գաթը պսակող մառախուղ մը, կամ շանթէ մեռնող կաղնի մը՝ ամբողջ պատմութիւ-
նը կազմեցին դիցազներգութեան, բոլոր կեանքը՝ ապրողներուն։ Անոնք չափազանց կ'ազգուէին իրէ մը, թէպէտ ամենաչնչին։ Անոնց համար անտարբեր բան չկար բնու-
թեան մէջ։ Բնութիւնն ալ իր կեանքը ունի։ Իսկ պ. Խահակեան, ապրելով դժբախտաբար քաններորդ դարուն մէջ, չէր կրնար անտեսել իրական կեանքն ալ. սա-
կայն երբ՝ զգուած՝ աչքերը կը դարձնէ իրարու յաջորդող բայց իրարու աննման կեանքի պատկերներէն՝ կը շարունակէ զեռ ամէն տեղ, ամէն իրի վրայ տեսնել գա-
նոնք։ Երբ երկու վայրկեան արեւին նա-
յիք, և յետոյ իսկոյն ուրիշ առարկայի մը՝ նորէն արեւ չէք տեսներ։ Իր և ձեր միջեւ խտրը խիստ նեղ է... արեւու գունտին չափ։

Հիմայ օրինակ մը։

«Մի որ քնքոյճ և մեղմաշունչ մի քամի հրեթական բարձունքի հիգուսն ի վար սահելով անցաւ. փարաւն ների բուրգերի բարձրահայաց ճակատների վրայով՝ Ի-
ջաւ ոսկալիքի հիգուսի ափսոսման և մի վայելչակազմ, նագելի և զեռատի արմաւնուտ ոտքերի տակ փուռց հեւ ի հեւ»։

Փարաւոններու ժամանակի բան, այս դարուս մէջ գտնուած։

Արհամարհոտ լռութիւն մը Արմաւենիի կողմէն, և կամ միայն անգութ կշտամ-
բանքներ։

— Ինչ ևս ժանդաղացում իմ, անպատկառ քամի... ինչպէ՞ս ևս յանգնում իմ զուրբ գալ... Կորի, Հեռա-
ցիւր այստեղից, դու անտուն, անհայր, անմայր, Թափա-
ռական քամի. — Կո՛ւ որ արքայական պարտէզների զարդն եմ, սիրամարդների և զրախտահարների երազը — ինչպէ՞ս կարող եմ մի մոլորաբոյժիկ անանկի իմ սէրը տալ...

Գուռ ո՞վ ևս որ... Դարբողից ևս գալիս, Դար ևս զնում, Դար է քո հայրներից, քո հարստութիւնը. ո՞վ է ճառա-
չում քեզ, որ այն չես միթէ, որ զիւրի-ցերեկ վայտմ
ևս աւերակների մէջ, օճուում ամայի ճամբէջուում... ամէն
դուռ փակ է քո առաջ, ես այդ գիտեմ. դու նախանիջ

աների ճրագներն եւ մարում, որովհետեւ տառն չունիս, զու թաշնայ տերեւներն եւ փողոտում եւ պոկում ու ճուռն ցան ու ցիր, որովհետեւ զու չար եւ եւ իսնդոտ. — Գնա, հեռացիր ինձանից...»

Իր բիրտ ուժէն առաջ՝ դեռ փորձեր կ'ընէ քամին, աշխատելով յիշեցնել իր անսանձ իշխանութիւնը, մերթ իր քաղցր օրօրը ծաղիկներուն, ասոնց թերթերու ահագարար փայփայումը, ու մերթ իր տուած զօրութիւնը ահեկնաւայաց արծիւ-ներիդ թեւերուն եւն, ինչ որ կ'ընար՝ բացի Արմաւենիի զայրոյթը մեղմելէ՝ համա-կրանք ալ ազդել: Անխախտելի է սակայն Արմաւենիի միտքը:

«Ես քո տէրն եմ, իմացիր հիմա... — Մոնչաց քա-մին, զաւարունց քամին, զայրացաւ քամին, Նեղոսի ան-չարժ ջրիւր զուրս թափեալին փփրից, շառաչեցին ծա-ռերն ու ծառատունկները բոլոր... զոգաց զողողողաց ար-մաւենին, իսկ քամին զրկեց նրան ձգոր բազուկներով, պոկեց արմատը... և տարաւ հեռով, հեռով. զէպի անա-պատները այրեց, զէպի ծովերը լազուր, զէպի լեռնա-զազանքները միւնափառ...»

Առեւանգում: Այսպէս ուրեմն, պ. Խա-հակեան նոյն անտրամաբան և անիրաւ ոյժը կը տեսնէ միշտ՝ թէ բնութեան և թէ կեանքին մէջ:

Հ. Ղ. ԲԻԻՎԵՆԸ



ՄԱՆՈՒԿ

և անոնց շահատակոյթիւնները

(Գահերէ — տպ. Արարատ. Ս. Դարբինեան 1907).

Անսօտակար հրատարակութիւն մը՝ զոր Գա-հերէի լսարան — ընթերցատունը ի լոյս հանած է:

Դա բանիմաց Տօթ. Ն. Տաղաւարեանի մէկ բանախօսութիւնն է՝ յիշեալ հաստատութեան մէջ:

Թէն 24 էջերէ միայն բաղկացած՝ սակայն պէտք է խոստովանիլ որ խնամքով պատրաս-տուած այդ գործը կարեւոր երկի մը արժէքն ունի: Եւ յիրաւի համալսարանական ընթացք կատարողի համար հեշտալի քաղաածք մի է դա Մանրէաբանութեան:

Հեղինակը ամէն ճիշդ թափած է ինքզինքը հասկանալի ընելով՝ իւր ունկնդիր ժողովրդեան. կ'ըմբռնեմ թէ որքան դժուարութեանց հանդի-պած է և բառագիրքերու դիմած պատուարժան Տօթորը, այդ նոր ուսումնական քաները հայացքիւն-յու նստարւ. Գովեստ և յարգանք գրագէտ բժշ-կապետին:

Հ. Ն. Տ.

ԳԵՂԵՑԻԿԸ ԼԵՋՈՒՒՆ ՄԷՋ

(ԵԱՐՈՒՆԱԿ. ՏԵՍ ԲԱՋՄ. ԷՋ 4)

Է.

Միտքործան զարոցիմ քմնաղատ մը. — Հիլլեմա-րան զարոցի անդամները. — Խորհմացիի ուս-ման միջնակարգը, — Ուսումնական ի մէջ մկա-րագիր ունէին Բիլլեմաղիոն և Աղբաւանդիւրիա. — Ի մէջ Բարկի տակ շնարուեցաւ շնչեմա-րանութիւնը, — Ի մէջ է հիլլեմաբանութիւնը. — Արտադարձութիւնը հիլլեմաբան գորտի մը, — Ուրկից կու գամ իր աստիճանաւորումն-ը, — Նղիշէ և իր հիլլեմաբանութիւնը. — Լեզուի եղբայրաւորումն Խորհմացիի գործն-րուն մէջ. — Դաւիթ Անյաղթի չափազանցու-թիւնը. — Իմէ որ տգէղ կայ հիլլեմաբանու-թեան մէջ. — Իմէ որ ազմի կայ հիլլեմա-բաններու լեզուի մէջ:

Հիլլեմուն մէջ միայն մէկ հոգի գիտեմ որ համարձակած ըլլայ ըննադատել Մե-րութեան զարոցի լեզուն: Եւ ըննադատել իր ազնիւ իմաստովը կը նշանակէ թէ մէ-կը արուեստի կամ կեանքի ու և է գործի մը վրայ կրցած է թերութիւն մը գտնել՝ որուն ինք աւելի ճիշդ, աւելի աւարտուն գաղափարական մը պէտք է ունենայ մըտ-քին մէջ: Եւ ճիշդ Խորհմացի Եղբայրի լե-զուն իր շատ մասերուն մէջ թերի կը գտնէ, եւ կը պարծի թէ ինք նոր արուեստ մ'ունի՝ իր նոր արուեստն է հիլլեմա-բանութիւնը՝ որ հայերէնի նոր ձեւ ու ձուլարաններ տուած է: Ինքն է որ հիլ-լեմաբանութիւնը մտածած է, ծրագրած ու զարգացուցած: Ինք զարոց կը կազմէ, ու-րուն փայլուն անդամները կ'ըլլան Եղիշէ և Դաւիթ Անյաղթ: Այս երեքը նոյն կամ նման կեանք մ'ունեցեր են: Հիլլեմաբա-նութիւնը հայերէնի մէջ իրենց ուսման մի-ջնակարի մէկ երեւոյթն է: Բացառութեան այս երեւոյթը Խորհմացի հոգեբանութեան մէջ:

Խորհմացի իր ուսումը Եղիպտոսի Ա-ղբաւանդիւրիա քաղաքին մէջ ըրած է: Ա-

1. Միտքործան զարոցի գրագէտներուն համար կը գրէ. Բայց քանզի անգէտք էին մերում արուեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր: Պատ. Գ. ԿԱ.